մոտ, մենք երկու մաս կլինենք, դուք՝ մեկ: Այժմ որքա՞ն են նրանք եղել:

Լուծում.-Առաջինները եղել են 7, վերջինները՝ 5: Եթե առաջիններից մեկը գնա վերջինների մոտ, վեց սրանք են լինում, վեց նրանք, եթե վերջիններից մեկը գնա առաջինների մոտ, նրանք լինում են 8, սրանք՝ 4: Լավ նայիր:

Ժ հարց.- Ջրաղացպանն ու իր աղջիկը, քահանան ու իր կինը երեք բաղարջ ունեն, ամենքին մի հատ տուր ամբողջ, կտոր չանես:

Լուծում.- Ջրաղացպանի աղջիկը քահանայի կինն է, երեքն են, երեք բաղարջը ամենքին մի հատ տուր: Լուծումը սա է:

ԺԱ հարց.- Մի փիլիսոփա իր աշակերտներին ուղարկեց ձուկ որսալու, գնացին, դատարկ վերադարձան: Ուսուցիչը հարցրեց՝ ինչ որ բա՞ն բերեցիք: Աշակերտները ասացին՝ ինչ որ բռնեցինք, թողինք, իսկ ինչ չբռնեցինք, մեզ հետ բերինք: Այժմ ինչպե՞ս է այս:

Լուծում.-Գնացին, ոչինչ չբռնեցին, նստան քթիվ արին, ինչ օջիլ որ գտան, չսպանեցին, ցած գցին, իսկ ինչ մնաց հագուստների մեջ, այն բերեցին, փիլիսոփան չհասկացավ, գնաց խեղդվեց: Այս է դրա լուծումը:

ԳԼՈՒԽ ԿԸ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՈՎ

Ժամանակի ավարտին և դարավերջին, երբ հայոց ազգը նվաստացավ ու պարսից ազգը զորացավ, որի իշխանության տակ նեղվում ու տառապում ենք կեղեքումով ու տեսակ-տեսակ ավարումով մեր 1148 (1699) թվին պարսից Շահ Հուսեինի և Արարատյան երկրում Ֆարզալի խանի իշանության, Սուրբ Էջմիածնում տեր Նահապետ Եղեսացու կաթողիկոսության ժամանակ պատմությունս ավարտվեց Արարատյան երկրում, Անբերդ[174] գավառում, Սյուղի վանքում, որ այժմ կոչվում է Օհանավանք, Սուրբ ուխտում գերափառ մենաստանում, որ մոտ է Արագածոտնի Կարբի գյուղաքաղաքին, Արայի լեռան հանդեպ, բարձր ժայռերի գլխին, կարկաչահոս ու ծիծաղագնաց Քասաղ գետի վրա իր բազմավերք ու խեղճ Զաքեոս Քանաքեռցու աշխատությամբ, որ ծառայության մեջ է

նույն Օհանավանքի որոշ պատմություն սիրողների խնդրանքով և մեր հոժարությամբ:

Արդ՝ ինչպես նախապես հայտարարեցինք, թե ինչ որ լսեցինք ի լրո, այն գրեցինք, եթե սուտ է, թե ճիշտ, թե գովություն լինի, և թե սուտ պարսավանք, նրանց հասցեին թող լինի, իսկ մենք արինք, ինչ հրամայվեց, իսկ դուք ինչպես կամենում եք, այնպես արեք: Ուստի աղաչում եմ, ով դուք ավազանի մկրտությամբ լուսածնունդ զավակներ, երկնավոր հորը՝ բազմաչարչար նահատակությամբ Սուրբ Լուսավորչիդ որդեգրվածներ, Ասքանազյան ազգից սերվածներ, թեթևամտորեն աշխատանքս մի համարեք խորխորատ նետելու, ձեր ծառաների ոտքերի կոխան դարձնելու, այլ ընդունեք սա որպես ծովից* մի կաթիլ և ողկույզի մի հատիկ ձեր բազում պատմություններից: Ընդունեցեք քչերը և ոչ միայն լավը հարգեցեք, այլ պակասը վատով լրացնենք, ինչպես խեցեղենը ոսկու փոխարեն և սևը նկարներում: Եվ Քրիստոս Աստծուն փառք հավիտյանս, ամեն:

*Ձեռագրում՝ դույլից: